ՀԱՎԵԼՎԱԾ

Հայ ժողովրդական բեմադրական պարարվեստի տարեգրություն (1920-1930-ական թթ.)

1917թ. - Թիֆլիսում բացվում է ասմունքի, ռիթմ ու պլաստիկայի ստուդիա (ղեկ. Սրբ.Լիսիցյան):

1921թ. - Ասմունքի, ռիթմի ու պլաստիկայի ստուդիան վերակազմավորվում է Սրբուհի և Լեոն Հազարապետյան ռիթմի ու պլաստիկայի ինստիտուտի (ղեկ. Սրբ.Լիսիցյան):

1924-27թթ. - Սրբուհի և Լեոն Հազարապետյան ռիթմ ու պլաստիկայի ինստիտուտում գործում է պարի խումբ (ղեկ. Սրբ. Լիսիցյան):

1924թ. - Ռիթմ ու պլաստիկայի ինստիտուտի պարի խումբը համերգներով հանդես է գալիս Մոսկվայում և Գերմանիայի մի շարք քաղաքներում:

1924թ. դեկտ. 26 - Երևանում բացվում է պարարվեստի առաջին պետական ստուդիան (ղեկ. Վ. Արիստակեսյան):

1926թ. - Երևանի պարարվեստի ստուդիան բեմադրում է Լ.Դելիբի «Կոպպելիա» բալետը (ղեկ. Վ. Արիստակեսյան):

1927-38թթ. - Երևանի պարարվեստի առաջին պետական ստուդիայի հիման վրա ստեղծվում է Հայաստանի ազգագրական պարի առաջին պետական անսամբլը (ղեկ. Վ. Արիստակեսյան):

1927թ. - Հայաստանի ազգագրական պարի պետական անսամբլի և Երևանի կոնսերվատորիայի երգչախմբի (ղեկ. Ապ. Մելիքյան) համերգները Մոսկվայում:

1927թ. - Երևանում բացվում է ռիթմ և պլաստիկայի ստուդիա (ղեկ. Ա. Դուրինյան):

1928թ. - Հայաստանի ազգագրական պարի պետական անսամբլը մասնակցում է Մոսկվայում կայացած առաջին համամիութենական սպարտակիադային, որտեղ արժանանում է առաջին մրցանակի, իսկ Վ. Արիստակեսյանը՝ առաջին կարգի դիպլոմ:

1930թ. - Սրբ. Լիսիցյանը հրավերվում է Երևան և ստանձնում ռիթմ, պլաստիկայի և ֆիզկուլտուրայի պետական տեխնիկումի ղեկավարությունը:

1930թ. - Երևանում տեղի է ունենում ՀԽՍՀ Արվեստների առաջին օլիմպիադան, որին մասնակցում են Հայաստանի ազգագրական պարի պետական անսամբլը (ղեկ. Վ. Արիստակեսյան) և ռիթմի ու պլաստիկայի ստուդիան (ղեկ. Ա. Դուրինյան):

1932թ. - Ռիթմի, պլաստիկայի և ֆիզկուլտուրայի պետական տեխնիկումի հիմքի վրա Երևանում բացվում է ռիթմի, պլաստիկայի և պարի ստուդիա (ղեկ. Սրբ. Լիսիցյան):

1932-38թթ. - Երևանի ռիթմի, պլաստիկայի և պարի ստուդիայի սովորողներից կազմվում են Հայ ժողովրդական պարի մանկական և ավագների անսամբլներ (ղեկ. Սրբ. Լիսիցյան):

1933թ. հունվ. 20 - Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի բեմադրությամբ բացվում է Օպերային թատրոնը (դիրիժոր Ս. Ստոլերման, ռեժ. Ա. Բուրջալյան, նկ. Մ. Սարյան և Մ. Արուտչյան, պարերի բեմ. Վ. Արիստակեսյան):

1934թ. - Թբիլիսիում տեղի է ունենում որվեստների ռնդրկովկասյան առաջին օլիմպիադան, որին մասնակցում են Հայաստանի ազգագրական պարի պետական անսամբլը (ղեկ.

Վ. Արիստակեսյան) և ռիթմի, պլաստիկայի և պարի ստուդիայի ազգագրական պարի խումբը (ղեկ. Սրբ. Լիսիցյան):

1935թ. մարտ 27 - Երևանի օպերային թատրոնում բեմադրվում է Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան (դիրիժոր Ա. Շաքիրյան, ռեժ. Ա. Գուլլասկյան, նկ. Մ. Արուտչյան, պարերի բեմ. Վ. Արիստակեսյան):

1936թ. - Մոսկվայում կայացած ժողովրդական պարի համամիութենական փառատոնին մասնակցում են Հայաստանի Կենտկոմի սկզբնական և միջնակարգ դպրոցի պարի խումբը (ղեկ. Է. Մանուկյան) և կառուցողների ակումբի ժողովրդական պարի խումբը (ղեկ. Վ. Արիստակեսյան):

1936թ. - Ռիթմի, պլաստիկայի և պարի ստուդիան ստանում է նոր կարգավիճակ և դառնում Պարարվեստի ուսումնարան:

1937թ. - Երևանում տեղի է ունենում ժողովրդական արվեստի հանրապետական օլիմպիադա, որին մասնակցում են Հայաստանի տարբեր շրջանների և քաղաքների պարային խմբեր:

1938թ. – Ստեղծվում է Հայաստանի երգի-պարի պետական անսամբլը (ղեկ. Թ. Ալթունյան):

1938թ. - Ստեղծվում է Հայկական պետական էստրադային նվագախումբը (ղեկ. Ա. Այվազյան), որտեղ բեմադրվում են նաև ժողովրդական պարեր (բեմ. Բ. Օրդոյան):

1930-1940թթ. բեմադրված ժողովրդական պարեր

Խմբական պարեր

Ալսագյոգլար, Աշխատանքային, Դալլո, Զոփի, Թամգարա, Թիթեռնիկներ, Կռունկի, Հայ նինար, Հարսնապար, Ղազ-ղազի, Մաս-բաբուչ, Մաքրուհի, Յար-խուշտա, Շորոր, Չոլ մայդան, Չրադվանի, Պարեր «Ալմաստ» և «Անուշ» օպերաներից, Պոլկա, Սաքմա, Սլեվան, Վեր-վերի, Փայլանջո, Փափուրի, Փերի, Քյոռոդլի և Քոչարի:

Մենապարեր

Ալ սաղլուխս, Աման նանա, Բահարուլա, Բաղդագյուլի, Բարիբախ, Զեյբեկ, Զիլալի, Զուռնի տրնգի, Թարաքյամա, Թեմուրի, Թոդի, Թոփալ Հայկոյի պարը, Թուրաջի, Լեզգինկա, Լեռնային լեզգինկա, Խմրապետ Մկո, Խնկի ծառ, Օանր տրնգի, Կարարդինկա, Կինտաուրի, Կովկաս, Հոպակ, Ղագախի, Ղարս, Մանած-գզած, Մաշտի-իրաթ, Միրգաի, Մրնջի, Նոնի, Նուբար-նուբար, Շալլսխո, Չաստուշկաներ, Չեմ-չեմ կրնա խլսդալ, Չեչոտկա, Ռանգի, Ռաստի գյոշ, Ռըզայի, Ռուսական պար, Սարի գյալի, Սևանի, Վրացական լեզգինկա, Տաշ-տուշ, Տույ-տույ, Ուգունդարա, Ուջադադլար, Փայլում է լուսինը, Քյանդրբագ, Օխտը քյոշանի տրնգի, Ֆոոկա